


ԽԱՐԿԱԿ

ՅԵՐԱՅՈՒՅԻ
ՆՈՅ՝ ԼՈՒՍՅՈՅ

Գինն է 10 կ. Գաւառնէրում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ին. Թիֆլիս. №43.

Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ



ԲՏԵՐԷ.

— Ողորմութիւն տէք, պարոններ ազնիւ ոռւսահայեր, ձեր եղբայր Բրբահայերը այսպէս մերկ ու քաղ- յած, այսպէս անտէր ու բոկոտն են մնացած: ԱՌԿ.ՆԵՒՈՅԻ

(Ինչպէս ձեր տեսնելու էին)

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI

Տարի

ՄԱՔԱԲԱԿ

VI

Տարի


Նրգիծաբանական-սատիրական պատկերագարող շաբաթաթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլվիչ, անկեղծ և կեղծա-
չոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ քերք բոլոր բնագծիների համար

«ԽԱՔԱԲԱԿ» շաբաթընթացիկ է, շաբաթընթաց էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:
Հասցէն՝ Тифлиς, редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Նրիցեան



«ԽԱՔԱԲԱԿ»

Բ Ա Ք Ա Ն Ե Յ Պ Ե Կ Ե Կ Ի Մ Ո Յ Յ Յ

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Նրբե ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուր-
հանդակ» ամենօրեայ թերթը ուղար-
կում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին
75 % զեղջ:

Չրի կարգացողներին պէտք է նկա-
րենք գլխավայր:

«ԽԱՔԱԲԱԿ» ՕՐԱՑՈՅՑԸ

ԽՍՏՈՐԻՆ ԶԵՐԲ ՏԵՐՈՅ ԷՑՈՅ

II

Էն օրը եւրաբ իս վճարի կազնեցի.
Լէօյի հարիւր տարի էրով զբաժ իստօ-
րիէն արտագրելու:

Մնամ պարուն Լէօն էն էր ասում—
ինթրիմ, կօսէ, իմ անումը էն մէկէլ
Լէօյի՝ վուր ապրել է քսանիւրորթ դա-
րի գլխին ու տասնութերորթ դարի
վերջին—նրա հիտ չխառնիք, կօսէ,
չունքի իս նրա թաւուր վճնչ խա-
պիւթ ունիմ, կօսէ, չունքի, կօսէ, ա-
սած է, կօսէ, ինչոր մարթս ինքն ի-
րեն կանէ, կօսէ, զուշմանը չի կանայ
էդ բանիւր անի, կօսէ:

Էս բանը զուրթ է սյ —աբա մէ զուբ
էլ փիբը արէք:

Էս անցած կիրակի օր կաթղկոսա-
կան նընդրութիւններ կէր միւր պիտ-
լած քաղքի ժամերում ու գիղիք թէ
միւր հօրիզունականները իրենց օյին
արին:

Աստուճ կինք տայ էլի միւր կոխտա
Գիգա Սատիսովին, ասինք, ուփրօ լաւ՝
լաւ է, վուր խիւք տայ, ամա թէկի
խիւք չըլի թող՝ կինք ըլի—մէկ չէ:
Խիւք ան կինք:

Ասինք կինք էլ կայ՝ կինք էլ—
կինք կայ վուր էրծաթ է, կինք էլ կայ՝
էրկաթ է. հուզրումը կի հիմի էրկա-
թը կի թանգացիլ է. մանէթանոցը վեց

աբասի, վեց աբասի էրկու շահի է
դառի:

Էս թանգութիւնն էլ ինչի է մօղա
դառի. Աստուճ գիղենայ իս արմացիլ
իմ ու չիմ գիղում թէ խալիւր մինչկի
իփ պիտի էսինց ախմախ ըլի:

Ասինք հացը վուր թանգանում է
ու խալին էլ վիւր է կինում կէս կա-
պէկ, չէտ կապէկ աւելի է տալի, ան
բաղի վուխտ էլ գորդովոյ է կանչում,
պրիստաւի մօտ խասաբի վրէն պրա-
տօկօլ ին շինիլ տալի, խասաբին ան
փոնչուն զուբերնատուրն էլ վուր
շտրաֆում է, վուրին քսան մանէթ,
վուրին քսանհինգ. էտ իս գիղիմ, հա-
մա խալիւր մինչկի հիմի էլ հինց գի-
ղում է թէ մենակ հացն ու միսն է
վուր մենակ թանգացել է. մէ տուն
մտէք թէ ձեր մամի գլխած հոքիքը
կու սիրէք ու պապի դանդրատոյի զօ-
րութիւնին կու աւտաք, տուն մտէք,
ասում իմ, ան շապկա կարողներու,
ան շոր ծախողներու, ան ուրիշ բանե-
րու զուբաններ ու կու տեհնիք թէ
թանգութիւնը ինչ հալի է:

Միւր հայ կընդիւրբը խօ մօղի համա
մեռած ին. Տօ չիմ գիղում թէ վուր-
դանց. համա ինչ տեհնիմ, մէկ օր,
տուն իմ գնում, ձեռիս կարմիր արբե-
չումի աղլսում Աստուճ օղորմութիւնը
կապած՝ քորիա բուղք, մոթալ, մի քիչ
կանաչի ու մի քիչ էլ Շուլաւրի հա-

1911 ՀՈԿՏԵՄԲԵՐ 31 օր

22

Суббота **ՀԱՅԱԹ** Ծաղոտո
Հունի 10

23 (կիր.) Շաբաթագործ ընտրութեանց
պատւիրակաց, որ ի Թիֆլիս և խայտառակ պար-
տութեան հորիզոնական անհորիզոն ամբոխի:

24 (բ. 2.) Տօն սրբոյն Ատրպետի քաջո-
մարտիկ զօրապետի, որ գնաղիւ հազ կարենց
գտանիլ գտեղի 75000 նպաստամատոյց զբամից:

25 (դ. 2.) Յիշատակ պոռոտախօսութեան
հաշի Համբարձում Առաքելեանի, որ եթէ լեզու
ոչ ունենայ՝ դադարաց կերակուր լինի:

26 (դ. 2.) Պահք այսօր չի կարելի հայրոյիլ
ի մէջ թերթից:

27 (ե. 2.) Տօն ամենայն նահատակաց ա-
բանց և կանանց հուղիղի ընթերցողաց, որք ա-
խորժապետ լինի գօղջօղանս—և զլրագիւր ոչ գնեն
էթէ զբխարութիւնն ի մէջ նորին չկայ:

28 (ուրբ.) Յիշատակ յիշոցաբան բանաս-
տեղծաց:

Տնտեսագետ և օրացոյցսպետ՝
Աղբաբոս աբ-վարդապետ.

դուր. իս էս տեղի հաղուղը ուժիւր
հաւնում իմ քանց թու Գանջին ան
էրենին:

Սասիաթ է:

Մենք սակու տակով էսինց խասիաթ
ունինք:

Հէրս էլ էս թաւուր խասիաթ ունէր,
իժում մեռաւ:

Հա, էն էի ասում. տուն մտայ թէ
չէ ու ինչ տեհնիմ—ձիր դուշմանը չը
տեհնի էն ինչ վուր իս տեհայ:

Կինս, իմ սակութար, օրինաւոր, նա-
րօտով կապած ու վրացնակ թաքաւո-
րի թագով պակած կնիկս, վուր մինչ-
կլի հիմի՝ աթաղան բաբաղան վունց
վուր միր աղիզ ու պատուով խալխի
մէջ պովորութք կէր՝ գլուխը ծած-
կած էր թամար դեղովիլի (թաքուհու)
հանգի,—վիր է կալի՞ չիխտի կուպին,
լեշաքն ու բաղդաղը ու ինչ՞ հայելու
աղաք կաղնիլ է ու մէ Մանգլիսից գի-
վիր բերած կարգինկի վրէն՝ բաղի,
հնդուհաւի, վարիկների, կանարէյկի
փետուրներ է շարել ու գլխէն դրել է,
ինձ տեհաւ թէ չէ սսեց.

—Գասպար ջան, վունց իս հաւնում,
կօսէ:

—Էդ ինչ իս արի ասի:

—Վա, խալխը դիւփ աղաք աղաք է
գնում ու իս կի ինչի պտիմ յիդ մնայ
կօսէ, մինք սւմնից ինք պակաս, կօսէ:

—Ասի՛ ամօթ է, ասի.

—Ի՛հ, կօսէ, թէկի պոգոսկապան Ա-
լէքի կինը շապկա կու ծածկէ, թէկի
քաղցած վարժապետի աղչկիւրքը կու
հաքնին շապկայ ու բմբաւոր մոա,
կօսէ. բաս իս կի չիմ կանայ, կօսէ:

—Իս, ասի. դարուլ չիմ ըլի ասի.
իս մարթը իմ ասի թէ չէ:

—Իս էլ չիմ կանայ էլ էստուր իղը
գլուխս ծածկի ու ահանջներս կալնի,
կօսէ:

—Գուզիս էսինց սարինք՝ չիս ուզի—
դու քու ճամփին, իս իմ ճամփին,
կօսէ:

—Ֆիէ ասի. խիլքդ ինչ է ասում.
ասի:

—Իս ասում իմ, վուր խիլքս ասում
է էն՝ ինչ վուր փքրիլ է անում, կօսէ,
գուզիս էսինց՝ լաւ, կօսէ, չիս ուզի ու
ու մօզ գուզիս գանգաւաւի, գուզիս
բաժնւինք, կօսէ:

Աբա, արս, ինչ կօնէիք գուք վուր
իմ տեղը ըլէիք. եռսուն ու հինգ տա-
րի մարթ ու կնիկ սարել էինք, վուն-

ցոր աղունակներ ու հիմի կի մէ շը-
լապկի համա բաժնուում ինք:

Ի՞նչ անէի. կանչիլ տւի միր տէր-
տէրին. ասի դարդս, տէրտէրն էլ շու-
ղաբ էրիդ՝

—Պրաւա ունէ, կօսէ, կնիկը թէկի
գլխի համա է փիքը անում կօսէ, խօսքը
դուս կեհայ, կօսէ:

—Մաշ ասի, դուն չէիր ասի, վուր
պակի ժուգ հարցրիլ թէ՛ «վուրթիակ
հնազանգ իս մինչկլի մահդ քու մար-
թուն» նա ինչ շուղաբ տւեց ասի.

—Նա ասեց թէ՛ «այո՛», կօսէ, համա
էդ այո՛ի դաւնոտոր անցիլ է, կօսէ,
հիմի դաւնոտար վրէն է բանի գօրու-
թինը, կօսէ:

—Բա ասի շապկա վուր դնի գլխին
ասի, ու իս էդու համա գնամ կոնց-
լիստոր՝ առաջնուրթին այդնիմ, ասի.
դրան խէլքի չին բերի՞ ասի:

—Գասպար աղա, խիլքից կու հանին
կօսէ, վունց թէ խիլքի կու բերին,
կօսէ:

է՛, էլ ինչ պտի անէի, դարբեցայ, ասի
Չհանգամը քու գլուխը ասի, հիմի քը-
թոցներ ու կարդինկաներ դիր գլխիդ
ասի, համա հէր օխնած կնիկ ասի,
քանց թու ինքդ իս շինում ասի, էդ
շապկաներ ասի, ուժիւր լաւ չէ վուր
գնանք միր շուլաւէրցի Գէուրք Չի-
լինգարովի շապկաներու մաղաղներ,
էնդի առնինք ասի:

—Ինչո՞ւ չէ. գնանք, կօսէ:

Վիկացանք, հաքնւէցանք իս ու կնիկս
գնացինք բուլար, մտանք Գէուրք
Չիլինգարովի շապկաների դուքանը:

Հէյ գիդի հա՛ ժամանակ: Մէ ջէր մէ
փեսայ էլ մինք ունէինք էտինց գղակ-
նիր էր ծախում.

Ճոն Հերապետը. բալքի իշէք, Աս-
տուճ հոքին լուսաւորէ, հեստի փա-
փախներ էր ծախում՝ մանէթ ան վեց
աբասով, վուր մազէրը մինչկլի աչքերը
գալիս էր, գլխին էլ վուր կոմբալնե-
րով հարիլ ջէր խփէին՝ էլի չէիր կա-
նայ ցաւը իմանայ:

Մաշ:

Հա էն էի ասում, տուն գնացինք
էտի՛ շապկաներ ջողելու ու մէ հեստի
սիրուն սիրուն աղչկերք էնչախնէթ բո-
լորքս մօզ էլան, կօսիս թէ քսանհինգ
տարեկան տղայ ըլէի. ախր էշխս էլի
մնացիլ էէ:

Կնգանս ասի. տեհնում իս ասի, էլի
վունց պատիւ ունիմ ասի, դուն կի

ասում իս ասի, վուր միթօմ թէ իս էլ
կոխաւ-մոխաւ չիմ ասի:

—Ի՛հ, քու գլուխն էլ ինչպէս էր:

—Ասի էդ շապկին ինչ տանք ասի:

—Տաս թուամն, կօսէ, ձեր աղիզ
խաթրու, կօսէ ծախող էրիս:

Իս գլուխս քորեցի, էդբա ասի խօ-
սիլ չի գիդի ասի:

—էն մէկէլին ինչ տամ ասի:

—Տասնուհինգ թուամնից պակաս չի
ըլի, կօսէ:

—Մէ հատ իմ առնում ասի, իս
դուքանը դիւփ միանայ խօմ չիմ առ-
նում ասի:

—Մինք էլ մէ հատի գին ինք ա-
սում, կօսէ,

—Ֆիէ. ասի:

—Մաշ, կօսէ:

—Ասի, ինչի ասի, էտինց գնիր էք
ասում, ասի, թէ հանաք էք անում՝ ասի:

—Չազրանիցի սպրանք է, կօսէ,
դրա համա թանգ է, կօսէ,

—Տօ հեր օխնածներ էլի զազրանի-
ցի ըլի ասի, էստի ինչ կայ տաճնու-
հինգ թուամնի ան հինգ մանէթի, ան ի-
րիք մանէթի ասի:

—Աբա հաշւինք, կօսէ, էս սօղէլը,
կօսէ, չուրս թուամն, կօսէ:

—Իմ հէսաբով մէ աբասի չաժի ասի:

—էս հաւի բմբուր ինչ աժի, կօսէ.


—Հաւը ինքը տաս շահի, իրիք աբա-
սի աւել չաժի ասի, էրկու հաւ վուր
առնինք, մէկը շախոխբիլ, մէկէն էլ
ճէնով կուտինք ասի, էրկու օր հերիք
է ասի, բմբուլն էլ շապկին մուքթա
կու մնայ ասի:

—Չէ էս հաւը խօ էսղանցի հաւ չէ,
կօսէ, գա ուրիշ թաւուր հաւ է, կօսէ,
զազրանիցի հաւ է, կօսէ:

—Ինչ իս հրամանք անում ասի,
հաւը՝ հաւ է արչ էլ արչ, մարթն էլ
մարթ ասի, ձեր հաւը, ազնաւուր խօմ
չէ ասի, հիմի ազնաւորներն էլ աւել
բան չին աժի ու խալխը ասում է հա-
ւասարութին պտի ըլի ասի, ու դուք կի
հաւերի մէջ թափաւութին էք գնում,
ասում էք, թէ սա թաւանկար է ու
միր հաւերը կի տնայտք ին:

—էսէնց է միր խաճէյնի կամքը,
կօսէ:

—Վունց թէ էտինց է ասի. մաշ խեղճ
փունջիներու ու դասաբներու օխտիցն
է գալի մենակ պօլիցէն ու գօրօգի
գոլովէն ասի. էտ ինչ խօսքիլ է ասի,
էտ ինչ բուխքիլ է ասի. հիմի վուր
պրօտօղօլ շինիլ ասամ ասի, վուտով



(Ըստ Եւրոպ. սասիրայի).

- Մէջքի վրայ եթէ վայր չղնես, տարած չես լինի...
- Փորձենք:
- Փորձիր:

դիտով սիրերական պտիք դառնայ էլի,
ասի, ձիր մէ հաւի բմբուլը տասնու-
հինգ թուաման էք ասում. մաշ սաղ
հաւը խօս հարիր թուաման կու ասիք,
ասի, իս էք բանիլը չիմ հաւնում, ա-
սի, Գէվուրը օխչում ախպերս է ասի,
խաթը պահում իմ, ասի, խասիաթներդ
փոխեցէք մէ գաւիդարաբա չիլի, ասի:

(էլի կուի)

Խաթարալա ամենայն հատց

Գասպար աղս Կարասուզով



Բ Ա Ղ Լ Ի Զ Ն Ե Ր

Ահ, խայթում են բաղիջները,
Միշտ խայթում են, ամեն օր...
Բայց խայթում են զիշերները
Բաղիջները այդ ստոր:

Նրանք պահում են ծալքերում,
Կամ մտնում են մութ տեղեր,
Քնած ժամիդ յարծակում
Եւ պատճառում թոյլ վէրքեր:

Նրանք կծում են քնքուշ,
Այնպէս, որ դու չզարթես,
Եւ զիշերով—այնքան ուշ,
Նրանց անեղ չդատես:

Բայց երբ յանկարծ, միասիտ
Դու շրջում ես անկողնում,
Առաւօտեան ճզգրիտ
Նրանց մեռած ես գտնում:

Եւ դու թէեւ հեզնական
Լուռ շարժում ես քո շրթեր...
Բայց զիշերը յաւիտեան,
Քեզ պիտ կծեն բաղիջներ:

ԼՓՕՐԻՉՄՆԵՐ

Կնատեաց փիլիսոփայի

Մահը կնոջ պատկերով է մեր աշխարհը մտիլ:

Եթէ մարդու մայրը կինը չլինէր, մարդը անմահ կըլինէր:

Որքան գեղեցիկ, այնքան անսիրտ է կինը: Ես չեմ հաւատում, որ կին կոչւած էակը հոգի ունի:

Հատ իս, կինը հոգեզուրկ մի մարմին է, ընդունակ զարթեցնելու մեր մէջ միայն և միմիայն կրքերից ամենաստորը—անառնասեռականը:

Վայ քեզ, եթէ կինը չափազանց գեղեցիկ է:

Ցաւն ու արցունքը կնոջ հետ են մեր աշխարհը մտիլ:

Կանանց ցեղից միայն Եւան էր որ մըտքով չէ գաւաճանել իր ամուսնուն:

Կանայք ապրում են միայն մարմնով և մարմնի համար:

Միայն իղէալական պարզութեան մէջ ապրող կինը կարող է բարոյական և առաքինի լինել:

Կինը—դա պանգորեան արկղն է՝ չարիքների հարգատ մայրը:

Միայն քեզ չէ պատկանում կինը, եթէ նա օժտւած է արտակարգ գեղեցկութեամբ:

Երբ ճառում են կնոջ քաղաքական, հասարակական, գեղագիտական իդէալները մասին—ես ծիծաղում եմ միայն: Միթէ շրթնային իդէալից զատ կինն ուրիշ իդէալ էլ ունի:

Կնոջ սէրը—դա նրա սեռական տենչն է, ֆիզիքական կարօտը:

Շատ կանանց համար պոռնկագիր Արցիբաշեվի աւելի բարձր է, քան Տոլստոյը, հեշտասէր Օրիգինոսը՝ քան Պղատոնը:

Studiosus



ԳՆՐՉԵԱԼ ԿԻՆԸ

Պեղատակութիւն 2 1/2 գործողութեամբ

Գործողութիւն 1.

—Տեսարանը ներկայացնում է հիւժմասաւոր գրականագետ Ճանիկ Քաջազունու առանձնասենեակը, ուր մահճի հանգստին մատնւած ննջում է վերջինս: Նա շատ է գրել, բայց միշտ էլ անյայտ ու գերօ է մնացել, շնորհիւ այն բանի—որ դժբախտութիւն է ունեցել հայ ծնւելու. և միմիայն ինքն է եղել—որ իր մէջ մտաւոր և բարոյական մեծ ընդունակութիւններ գտնելով, շատ անգամ աղ դրած թառափի վրայ ցանւած չոր տերեւներին նայելով մըրմընջացել է—«Խղճուկ դափնիներ...»: Նա որքան շատ է աշխատել այնքան աւելի է քաղցել ու հիմա գունատ ու մաշուած, մերձի մահ պարկած է մահճում և երբեմն խրնամքով ածկւող վտիտ կղակին ցանցատ մօրուքն է բսել:

—Նրա գլխի վերև հրէշ կամ հրեշտակի պէս նստած է իր երիտասարդ տիկինը—

պչրուհի Սառան, որ սխալմամբ ամուսնացել է առաջինի հետ, նրա թիկնալի և Սաջէ-Հաֆիզ սիրային բանաստեղծութիւնները կարդալով ու ազդելով: Եւ արտասւելով հանդերձ, զարմանում է ինքն իր աշերից—որ ամեն դատարկ բանի համար, պատրաստ են պանրի կտորած կարասի նըման ողի կաթիլներ թափելու: Ինչպէս ամեն կին նէ ևս բնականից փաստարան է ծնւել և պատկանում է Լիւցիֆէրի խոհական կուսակցութեանը, բայց ամուսնու օրհանն աչքի առաջ ունենալով, պահ մի մոռացել է այդ և որպէս տրամութեան մի մունջ ոգի ցանելով հանդերձ, մտորում է—նոր գարուն, նոր բարեկամներ, նոր օրեր ու շորեր, մահու կերտներ, յուզարկաւորութիւն, Հիմենեան նոր խինդ ու նազներ, ծաղիկներ, անմիտ գիշերներ... Դիմացի սեղանի վրայ թշշում է շերի ծոյլ—միօրինակ ձայնով, կանչող ու հետզհետ հանգչող հեշտասեր, որը մի փարթամ զինւորականի նման կանգնած է սև փայտէ կլոր ուսադիրներ վ, կարճ թևերով, հաստ փորով ու երկար... ՇՕՊ! ուզածիս անունը հայերէնում չկայ—դէ այսպէս ասած. քաղաքագարգ զլանակով, որից կաթկաթում է եռող ջուրը... Ե որպիսի նմանութիւն է գտնում նէ այդ թշշող հեշտասերի և այն սիրելի զինւորականի մէջ, որի հետ նէ ամեն գիշեր զբօսի զնալով, վերադառնում է շիկնած այտերով և յաճախ զգեստը—թիւնս մոռացմամբ, տեղ տեղ առանց կոճկելու:

—Ահա գալիս է Սառայի հնամիտ մայրը կամ հիւանդի զօքանչը—այդ միկնոյն է, որը յաճախ խոհեմութեամբ խոստովանում է, թէ իր հոգին պիտի Սաթայէլի բաժինը զստնայ: Այդ քաթասը ամեն անգամ ձանիկին տեսնելիս զլխացաւ է ստանում և զուցէ հենց այդ պատճառով մազերը պարսկական խինայից փայլում են միշտ քրքումի գոյնով: Նա իր դստեր և մեռնող փեսայի տանը տեղի ունեցող տխուր դրամայի յուշարարն է հանդիսանում և յուսահատ հիւանդի տագնապալի զալարումները տեսնելով—այնուամենայնիւ ցաւում ու լալիս է իր դստեր համար, որպիսի լացն ու ցաւակցումը ընդհակառակն ընդունելով հիւանդը, միամտաբար յուզում է նէրա քաղցր ու սիրալի կարեկցանքից: Որովհետև նէ ամեն առաւօտ թէյի հետ իւղ է ուտում և իրքև նորութիւն հեղինակաւոր շեշտով պնդում է միշտ, որ իւղը շատ առողջարար ու սննդարար է... Ես անւանում եմ նէրան Իւղա (Իւղաբերի — Իւղիկ փաղաքշականի կրճատմամբ): Եւ այդպէս՝ զգոյշ գրպանահատի քայլերով Իւղան մօտենում է Սառային—

Իւղա.—Հը՛, քնած է:

Սառա.—Այն մայրիկ, սակայն տես կենդանութեան նշոյլ չկայ դէմքին:

Իւղա.—Եւ դու կարծում ես, որ այդ վատ է. բաւական չէ միթէ քեզ քո տառապանքը, ժամանակ չէ միթէ քեզ ազատել զբաւեան քրոջ պաշտօնից:

Սառա (հեկեկալով).—Սուրբ Աստուածածին...

Իղա.—Անմեռ. դու լալիս ես, և ի՞նչու: Սառա.—Ապա ի՞նչպէս չլամ մայրիկ, երբ աչերս փչանում են արցունքից, կորցնում են իրանց երիտասարդական փայլը:

Իղա.—Դէ, ուրեմն մի լար:

Սառա.—Ապա ի՞նչպէս ցոյց տամ իմ ամուսնական անձնանկրութիւնը, ի՞նչով շոյեմ նրա յոռի հաւատը...

Իղա.—Աւելորդ է: Սոսկալի քո կամաւ ինքնաջօշոտումը. ինչպէս կարելի է, բաւական չէ միթէ որ դու քեզ կենդանի թաղել ես այստեղ...

Ճանիկ (հագում է ու է բանալով պղտոր աչքերը, շրջում է դէպի նէրանց).—Մի...

Սառա (մօտենալով շոյում է նրա խճճուած վարսերը).—Սիրելիս, ինչպէս ես զբոսում քեզ:

Ճանիկ (խիստ յուսահատ ձայնով).—Վատ: (Իւղայի գլխի ցան սկսում է և դուրս է գնում),

Սառա.—Սրտիս թաղաւոր, ես սիրում եմ քեզ, խօսիր իմ խղճիկ, իմ տանջւած... ի՞նչու ես լռել, ի՞նչ ես մտորում...

Ճանիկ (թուլացկոտ).—Ես մտորելով—վերայիշում եմ մեր քաղցր յուշերով լի անցեալը, երբ ես դեռ ժպտալ գիտէի, երբ դու վերստեղծելով ինձ քո առաջին կոյս համբոյրով, կեանքի եղեմը նետեցիր, որտեղից չէում եմ հիմա...

Իղա (վերադառնալով). — Հանգստացիր փեռնա, դու մաշում ու ծերացնում ես երեխայիս քո ցաւագին միօրինակութեամբ... ի՞նչպէս կարելի է. տես. մեր շուրջը ամենուրեք ետում է խնդալի կեանքը, իսկ այս տունը նմանում է անքոց ու հառաչներով լի մի կորած գերեզմանի:

Ճանիկ (խիստ հաղալով և ըստ երևոյթին չլսելով նէրան, դիմում է Սառային).—Մի գնար... կաց ինձ մօտ խնդրում եմ... սոսկալի է մենութիւնը (շրջում է դէպի պատը):

Իղա (Սառայի ակնշնչով). — Շտապիր հագնել, նա եկաւ աւտոմօբիլով և սպասում է պատշգամբում. այնպէս ճաշակով է հագնւած և այնպէս գեղեցիկ է իր սրով ու ուսաղիքներով...

Սառա.—Մայրիկ, տես հօ աչերս չէն պղտորել արցունքից, հօ չեն կորցրել իրենց հմայքը:

Իղա.—Ձէ, գրաւիչ են ու միանգամայն պարզ—որպէս կռուների աչուները:

(Չգուշութեամբ ծածկում են դռները յետև):

Վարագոյր

Գործողութիւն 2.

—Տեսարանը ներկայացնում է Սառայի առանձնասենեակը, որի բաց պատուհանից երևում է դուրսը — պատշգամբում նըստած սիրոյ մուրացիկ՝ սպա Վահրամը ծխախոտը բերանում. նա զինու և առաւելապէս գեղեցիկներին քրտնած մարմին-

ների բուրմունքի ջերմ սիրահար լինելով և շարունակ մեղանչելով Սինայի VII-րդ պատերազմի դէմ, դեռ խիստ բարկութեամբ յանդիմանում է նոյն իսկ իր որսերին, այսինքն այրոց կանանցը—որ նէրանք ոչ միայն չհամբուրեն իրանց ամուսիններին, այլ և դուրսը չըրջեն նրանց հետ և այդօրինակ դաւաճանութեամբ չկոտորեն իր նուրբ ապակու նման սիրտը: Այդ օրն էլ ըստ սովորականին եկել է—Սառային զբօսի տանելու դէպի Վէրայի այգիները և ահա Սառան՝ որ խիստ բծախնդիր է հագուստներ և գոյներ ընտրելու մէջ, վերջապէս երկար վարանելոց յետոյ, կանգ է առնում Spirale (Մալիրալ) կապոյտ զգեստի վրայ և սկսում է հագնել Իւղայի օգնութեամբ, մինչ միւս սենեակից լսում է թշուա Ճանիկի խղճալի հագոցը:

Իղա.—Ի՞նչ, միթէ փրփուր գոյն զգեստ չես հագնում:

Սառա.—Օ՛ մայրիկ անտանելի են այդ Ֆրանսիական ժանրի զգեստները, ես ահա այս կապոյտը կը հագնեմ որ աւելի համապատասխան է անգլիական ճաշակին և Մադամ Ժանօյի կարն է:

Իղա.—Դէ լաւ, շտապիր:

Սառա.—Տես մայրիկ սրա գործածքը որքան նուրբ է—կատարեալ իդէալական հրաշալիք. այս կտորը յուշում է կարծես մի հէքիաթական անհասանելի աշխարհի արքայական ապրումներից, կարծես խօսում է ինչ որ անցած ու անդարձ երազներից, կախարդ անուշներէջ...

Իղա.—Եւ ի՞նչ ուժեղ բոյր ունի. ի՞նչ ես սրսկել:

Սառա.—Փարիզեան Լեգրան Ֆիրմայի «Մանօն-Լէսկօ» անուշահոտութիւնը: Սրա բոյրն էլ յուշում է ինձ այնպիսի քաղցր հիւանդութիւններից, որպիսիներն են նոր սէրը, անքնութիւնն ու մեկանխօլիան:

Իղա (լուրջ).—Լսիր Սառա, իսկ եթէ նրա սրտի արիւնհոտութիւնը նորից սկըսւի... ես... ճշմարիտ վախնում եմ:

Սառա.—Վախենալու ոչինչ չկայ, տաշտը այնտեղ է:

Իղա.—Իսկ եթէ կանչէ քեզ:

Սառա.—Ասա որ՝ նորից բժիշկ հրաւիրեւելու գնաց. այսօր ես շուտ կը վերադառնամ. փոքր ինչ կը զբօսենք զով ծառուղիներում, կը լսենք լարանաւ խմբի մեղեդիները, և առաջին ջութակի solo սօնատները, որոնց հեծկաուն հնչիւնները սիրտս թափանցելով—թրթռում են նրա թրթռանքի հետ ներզաշնակ... Բայց տես մայրիկ, եթէ մեռնի—հարեաններին չիմացնես մինչ իմ վերադարձը... ահա և պատրաստ եմ ես:

Իղա (ոտից մինչև գլուխ գննելով նէրան).—Սխտ սագում է քեզ այդ զգեստը. եթէ նա մեռնի այլևս չես կարող հագնել այդ:

Սառա.—Եթէ մեռնի — կարող եմ սև ներկել:

Իղա (հայեացքը չհեռացնելով նէրանից).—Միանգամայն չքնաղ ես, միանգամայն

արժանի Վահրամինը լինելու, եկեղեցական պատկով:

Վահրամ (պատուհանից).—Ե՛կ մեկնելով եկեղեցով կապելը չունի այն հմայքը, ինչ որ կօնորարարտը. նա սիրելի Փիսիկս, պատրաստ եմ, գնանք:

Սառա.—Վահրամս... (վազելով նրա գիրկն է ընկնում և լուս—երկար համբուրում են):

Իղա (խենթային հիացքով).—Աստուած իմ, ինչ գեղեցիկ են սրանք այս գիրքի մէջ...

(Ներսից լսում է մեռնող Ճանիկի խուլ տնքոցը և մերթ ցաւագին ձայնը, որ կոչում է աղաչաբար՝—Օ՛ղ, օ՛ղ...)

Վարագոյր

Գործողութիւն 1/2.

—Տեսարանը ներկայացնում է եկեղեցու սրահը, ուր երկու զոյգ առկայծող կերօսների միջև դրած է Ճանիկի պսակազարդ դագաղը, որի շուրջը խնւած ծանօթ ու բարեկամների իրարանցման մէջ—թուլացկոտ Սառան Մադամ Ժանօյի կարած սև զգեստներով պճնազարդւած, մերթ ընդ մերթ մարելով ընկնում է իր բարեկամուհիների թևերին, իսկ մայրը՝ Իւղան, որ ազատել է զխացաւից, շուտ-շուտ наша-дирный спирт-ի սրահն է մօտեցնում իր սգաւոր դատեր քթին: Լսում են շուկներ.

—Մեր ժամանակներում դժուար կը գտնւին Սառայի նման մոլի սիրող կանայք:

—Ահա Աստուածային սէրը...

—Օ՛ հանգուցեալը բաղդաւոր էր...

Վահրամ (որ գող կատուի նման բեխերը սրելով—նայում է հեռւից).—Օ՛: ինչ սիրտ ճաքացնող մարդիկ են...

Վարագոյր


Մարիկ

* * *

Սիրտ ի՛մ, դադարի՛ր, Դեռ կեանք չեմ տեսել... Սիրտ իմ, նախարտի՛ր— Դեռ սէր չե՛մ շնչե՛լ...

Սիրտ ի՛մ, դադարի՛ր Լաց ու շիանից Եւ ապրի՛ր, սիրի՛ր Կեանքը բուրալի՛ց...

Նարգիզ



Դժարութիւն

—Այ կնիկ մի տեսնէիր, թէ պրօսպեկտում էնչ սիրուն, կաքաւ աղկերք էին ման գալիս...

—Այ մարդ, էնչ կըլինի, որ մի օր էլ էնձ տանես պրօսպեկտի սիրուն, ջէյրան աղերանցը տեսնեմ...

Գ. Ե. Կ.



«ՄԵՀԱՆՆ ԵՐԳԵՐ»-ՅԻՑ

(Ն. Գրիգորեանի շիրիմի առաջ)

Մահ, ով աշխարհաւեր Ոգի, որի անունից դողում է և օրօրօցի էն մանուկը նորածին, և՛ դաշտի էն ծաղիկը նորբայաց, և՛ էն արքան հպարտ, և՛ էն արևը լուսաբեր...

Մահ, ով միակ անմահը համայն տիեզերքում, որի դէմ անգօր է և իմ հոգին ապստամբ, և իմ գրիչն ազատազոռ, և իմ սէրը ծով...

Աւանդ, լուսնի տակ չգտայ մի ճանապարհ, որը դէպ քո թագաւորութիւնը՝ դէպ գերեզմանատուն չտանէր...

Վահ, և՛ մարդ, և՛ արև, և՛ ծաղիկ... համայն տիեզերքը բոլոր ճանապարհներով դէպ քեզ՝ դէպ քո թագաւորութիւնն են գալիս...

Գալիս եմ և ես...

Գալիս եմ, անիծելով անունդ, ով ամենայաղթ ու ամենասպան Ոգի...

Գ. Գարգուրի

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՓՈՐԻՉՄՆԵՐ

(«Թալմուդ»-ից)

Մարդուն կարելի է ճանաչել երեք դէպքում. խմելիս, փողային հաշիւների և բարկութեան ժամանակ:

Մի նայիր ամանին, այլ տես թէ ինչ կայ միջումը:

Մարդիկ դաշտում եղած խոտերի են նրման, ոմանք ծաղկում են, ոմանք թաւածում:

Երիտասարդութիւնը վարդերի մի պսակ է, ծերութիւնը՝ վշտայ թագ:

Կիրքը մարդու մէջ սկզբում նման է թելի, յետոյ՝ հաստ պարանի:

Կիրքն սկզբում՝ որպէս օտար, յետոյ՝ որպէս հիւր, և վերջապէս՝ տան տէրն է հանդիսանում:

Ես շատ բան եմ սովորել դաստիարակներիցս, աւելի շատ ընկերներիս մօտ, բայց ամենից շատ՝ իմ աշակերտներից:

Քար է ընկնում պուլիկի վրայ՝ վայ է

պուլիկին. պուլիկն է ընկնում քարի վրայ՝ վայ է պուլիկին. այսպէս թէ այնպէս՝ միշտ էլ վայ է պուլիկին:

Ո՞վ է հերոսը—նա, ով իր թշնամուն իրեն բարեկամ է դարձնում:

Տեղ բռնիր աւելի ցած՝ քան վայել է, որովհետեւ աւելի լաւ է, որ ասին քեզ՝ վեր բարձրացիր, քան թէ ասին՝ իջիր ցած:

Որքան ծեր է դիտունը՝ այնքան աւելի մեծ է նրա իմաստութիւնը, որքան ծեր է տղետը՝ այնքան աւելի մեծ է նրա յիմարութիւնը:

Գ. Բարուրեան



Մեծի Խաթարալայութեան Ամենայն Հայոց

ՏԷՐ, ՏԷՐ ԳՆՍՊԱՐ ԲԻՉԵՑԻ ԿԵԼՏՈՅՁՈՎԵՆՑ

Ի ծնդրիկ Արեգայդ Վեճակաւորին՝ Գիւլանի, Մազանդարանի, Թալիշ-Թուրքի, Ալալան-Քեարզեհաւի, Պոլսամի, Փիլբաղարի, Լանգեստութի-Քեարզեստութի, և այլն, և այլն. զԱմենախոնարհանման նամակ.

Բարձրագոյն տէր!

Վասն ծուլութեան խմար չէր, որ զերկար ժամանակ ոչ գրէի պատուականաման թերթիդ «Պաթարալային»: Փակեալ ի մէջ խաղաղիկ բնակարանին մեր, զօր և գիշեր աշխատէաք ի վերայ գրական մի նշանաւոր աշխատութեան, որ կոչի «Կենսագրութիւն Ազգային մեծամեծաց» և զոր ամփոփի կենսագրական և քննադատական ինչք նշանաւոր գործչաց անւանի ազգայնոց, որք են՝ Մինաս Չէլաձ, Հալի Համբարձում Աղա, Արշակ Չօբան, Առաքել Ապէր Պանբարխան, Բիզանդ Գէշիեան, Սուքիաս ս. Պարզերեսեան, Ակնունի, Քեալանթար, Սապահ-Գիւլ, Դուրեան, Մեարովը եպ. Թուրօեան, Գասպ. Կալաուողովեանց, Շիրվան, Արզուեան, Իշխանն Աղթամարի, Սողոմոն-բէգ Տող գիւղի, Տեսուչն Սալմաստի՝ Սամսոն,

Սաղաթէլեան Դուսայի, Միլլիթի, Միլլիթի, Միլլիթի սի, Բասարմաշեան Պարլաւորի, Միլլիթի, Միլլիթի կանաց, Վաւմեան, Պոլլ Լեոն, Շահրիկեան, Ատրպետ, Սուրէնեան սրբ., տէր-Մելեան, Մուրադբէկեան ս., Կարապետ եպ., Ռուբէն Չարդարեան, Եփրեմ խան, Մուշեղ եպ., Տաղաւարեան, տիկին Թօփչիբաշեան, Ալ. Տէր-Վարդանեան, Բաբա-Գասպար, Ահաբոնեան, Մեծ-Մուրադ. Սպանդարեան, Օրմանեան, Ճնդրիկ Արեգայ, Մշակ, Նոր-Գար, Հորիզոն, Հովիւ, «Պաթարալա», Սուրհանդակ, Աղբիւր-Տարազ և այլն և այլն և այլն: Այդմ նշանաւոր երկ մաս առ մաս փութանակի առաքեմք Պաթարալայիդ, եթէ սակայն արագասլաց փոստայն Պարսկաստանի բարեհաճեցի մինչ եկող ասորի այս ժամանակ հասուցանել Ձեզ, կամ փոստաչին Բագրի թշնամութիւն ոչ ունիցի զՁեր կամ ըզմեր հետ, ամմէն:

Տէր, Տէր Բիճա Գասպար! նախօրօք ես զնորհակալ եմ Ձեզանից, որ այս գրական աշխատութիւնն ետուք ինձի, քանզի, եթէ այս աշխատութեամբ գլուխս խառն ոչ լինէր, թերևս ես էլ դուրս եկեալ բնակարանիցս, դժբախտութիւն ունենայի ազգային գործչաց «Ասուած օգնականին» պատասխանել՝ «Ասուած պահապան» և այսօր փորձաք մի ևս իմ գլխոյս բերէին, ամբաստանելով զիս, թէ տեսեալ եմ իրենց և զհետեւի խօսեցեալ... Փառք Տեսուն: Փաթերակ մեծ փրթեալ կայ այս այժմ ի Գիւլան և ի Մազանդարան (որ ի Պարսկաստան) և Փաթերակն այդ ոչ-կարծէք, զՄամադ-Ալի շահանման մարդն, որ ծածկեալ ի գլուխն թալիսմայական Քեօլօզն ըստ պառասպելից, շնորհիւ Վեճ Շէյթանին, ոչ երևի աշացն մարդկային և համայն աշխարհ որոնին և ոչ զանհն տեղն նորա և բնակավայրն: Փաթերակն այս յառաջանայ՝ երէկւան յանդուգն ազգային զգործիչներից, որք ոչ զիտեմ զինչ զայաթ են արարեալ—այժմ ոմանք հազար թուման արծաթիւ գնեալ «մկան բուն» թաքնեալ են, ոմանք՝ մտեալ «իշի դրախտն», անխնայօրէն և զաղափարապէս մասննն զմիմեանս և զկամաց-կամաց թիւ իւրեանց աւելացնեն, հետեւելով այնմ խելամիտ առակին, թէ «Ընամուս գիւլան՝ եօրաշ չօխ իստար»... Եւ անխնայօրէն բացեալ թանձր վարագոյրն՝ առաջի անիդ դատաւորին, ոչ միայն մանրամասն պատմեն արարեալ գործք և զայաթք միմեանց, այլ և բացեն բազում ընտանեկան զաղանիքք, ինքեանս ցուցանելով բացարձակ համակող սկզբունքանցն «Ազատ սիրոյ (որ է՝ Սիրոյ Լիզային): Օրհնեալ եղիցի Տէր օրհնեալ «Պաթարալան», որի շնորհիւն մենք և բնակարանն մեր ազատ եղև ի չար գիւաց, ի չար զրպարտչաց և ամենայն չար զօրութեանց չարին, ամմէն:

Յոյժ զաղտնի—Սիրելիդ մեր Գասպար Բիճա, ընդէր մոռացեալ ևս մեզ. մօտենայ կաթիլիկոսական ընտրութիւնն, ընդէր ոչ արծարծես հարցն վասն զընտրութեան նւաստիս: Ամենեքեանք զվախա-վխտս

պատճառ մի բռնեալ գան Թիֆլիս էջմիածնականք և վասն ընտրելու համար— գաշքի երևան, բայց մենք ոչ կարեմք դալ, քանզի ձվ կըտայ մեզ զճանապարհածախսն անգլին: Մեարովը սրբազանն, որ եկաւ զվերջին անգամ— ի կողմանէ տեղակալին ոչ բերեաց արդեօք երկու արկղ Ղըռի-այլուոյ «եզան աչք» կոչեալ խողովն և յուլի ղեղձէն՝ վասն խմբագրութեանդ և աշխատակցացդ: Խորեմ Բէճուրպեանն չուղարկեանք զերևանայ անւանի կօնսերվքն պտղոց Գէղեօնի... Ես պատրաստեալ եմ տասն զմէշօկ Ագուլի ընտիր բրինձ վասն բոլոր աշխատակցացդ (քանզի զայստեղ լաւ բրինձ միայն լինի) և յորժամ պատուիրակքն գան զիս տանել ի գահ կաթողութեան, հետս զկըբերեմ: Ամմէն,

Աղօթարար վասն խայոց ազգի ճնդրիկ Աբեղայ

1911 թ. 10 հոկտ.

Ի մայրաքաղաքն Թաիշ-Թուրք

№ 127

Մենամարտից ստաջ

— Դուք, ուրեմն, չէք հրաժարուի ընդունել կողմ Իսկ ինչ տեսակի հրացան էք մտադիր ընտրել: — Շամփուր: Ես արնապակաս եմ. և բժիշկերը միշտ ենձ խորհուրդ են տել երկաթ ընդունել:

Վաճառականների մէջ

— Լսել էք, պարոն Սիմէօն, որ իմ խանութը այրեցին: — Մի՞թէ. ապահովադրած էր: — Էդ էլ հարց է: Բաս միթէ նա կարող էր այրել, եթէ ապահովադրած չլինէր: «Բ»

Կենսագրաբիւնք

Ա Զ Գ Ա Յ Ի Ե Մ Ե Թ Ա Մ Ե Թ Ա Յ

I

ՄԻՆԱՍ ՉԷԼԱԾ. — Ծնեալ ի Հոսհոսապուլ. ի ծննդեանէն կոչեալ աղբային գործիչ, քանզի՛ լեզուն բացեալ— թօթովէր գաղղիանման առզանութեամբ. յուսումնարանի առերես սիրէր բոլորեցունց ուսուցչաց, առանձնակի ատէր զամենեսեան, զմտաւ ածելով՝ ընդէր նոքա են ուսուցիչք իւրեան և ոչ թէ ինքն նոցա: Ի սկզբանէ կամէր լինել կուսակրօն, վաստճ՝ զի կաթողութւ լինելոց է, սակայն վերջն ժիտքն փոխեաց և եղև խմբագիր և քանզի ոչ կամէր հայք հասկանան զփշոցաբանութիւնքն իրան և քննադասեն, ուստի ի լեզու գաղղիական հրատարակեաց, սակայն զանունն L'Armenie գրեալ: Ազգն վարձատրեաց զնա, կարգելով առանց վկայականի՝ Համազգային ներկայացուցիչ ի մէջ Եւրոպիոյ— վասն արդիւնելոյ գործադրութիւնն երեսնամեայ մեռեալ 61-րդ յօդւածի, սակայն վերջին անգամ ի Հազգա բժիշկէն Լօուիս-Մէլիքեան զնորա խաթրին կպաւ: Ի Փարիզ շրջէր, զգզգեալ կօշիկօք, խոնացեալ վերարկուիւ և իւղոտեալ զխարկիւ, վիզն փորն քաշեալ, խղճալի և ողորմելի. յետ սահմանադրութեան Թուրքիոյ, օտից ցզլուխ նորո-

զեցաւ, վիզն շտկեալ, կուրծքն դուրս ցըցեալ, յոխորտ տեսեամբ, իւրոխտ արտայայտութեամբ, առօք և փառօք, Փշանգօք և շուշխունայիւք, մտաւ ի Պօլիս բազմեցաւ յաթոնն նախագահութեան Ազգային ժողովոյ: Երկար չքաշեաց, նա տեսաւ, որ Կովկասէն երամ-երամ թռեալ և եկեալ ագռաւ ու ճիւք, բու և բուէճք, որք զերկաթէ ճուանս ածին, փաթաթեաց զարուն իւր և սուսիկ-փուսիկ ձկեցաւ կրկին Եւրոպա: Եւ ոչ երևի տեղի նորա...

II

ՀԱՋԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂԱ ԱՌԱՔԵԼԵԱՆ. — Ծնեալ ի Շուշի, սնեալ և մեծացեալ ի Պարսկաստան, կրթեալ Ռուսաստան և Եւրոպա. և այդ է պատճառ, որ բազմապիսի յատկութիւնք կան ի մէջ նորա: Գործեալ է ամենայն տեղ, մանաւանդ ի խաւար անկիւնս աշխարհին, որ կոչի Պարսկաստան, ուր յայտնի է որպէս անւանի Ախատաբան, քանզի առ ի զբոյէ օրէնք և դատաստանազիրք, անւանի լինին յոյժ սակաւք և փաստաբանն ինքն պարտաւոր է յօրինել օրէնք և ըստ այնմ պաշտպանել զկիլիէնտն իւր: Եւ Հաջի Աղան մեր յոյժ ընդունակ է այդմ մասնագիտութեան: (Քաւ լիցի մեզ ուրանալ զընդունակութիւնն յայդմ մասնագիտութեան Աղա Վաքիլի Մամադ-Ալի Շահանյ, զոր Ատրպետ յորջորջի): Ի վաղուց հետէ երեք անւանի գործիչք՝ Մինաս Չէլած, Տիգրանիկ Նազարիկեան և Հաջի Աղան մրցէին ընդ միմեանս, թէ՛ ըզթրմէկն լինելոց է համազգային հայ ներկայացուցիչ ի մէջ եւրոպական կաճառաց յոյժ գիտնակաւնաց. և քանզի զերեքն էլ, լնա էնէնց, հաւասար դոյժիր են, ուստի համաձայն են, զի՝ Մինաս Չէլածն եղիցի ներկայացուցիչ հայոց ի մէջ Վենետիկովի դոանն Հագգա մայրաքաղաքի և եթէ ներս ոչ թողուցուն, ճառքն իւր վասն փրկութեան Հայաստանի ասիցէ շէյքարին (որ է դռնապան) Վենետիկովի և թերեսնա հասուցէ ականջան անգամոց Վենետիկովոյ: Տիգրանիկն եղիցի ներկայացուցիչ հայոց ազգի ի գրանն թագաւորաց Եւրոպիոյ և մասնակցեցէ ճաշկերոյթիցն թագադրական արարողութեանց, որպէս ի վերջին պահուն ի թագադրութեանն անգլիական թագաւորին: Իսկ Հաջի Աղան եղիցի ներկայացուցիչ ի ժողովի հնագիտաց և արեագիտաց և ճառեցէ զհայկական «Աւարդ փտուացս անցաւորի», Հայրն Հաջի աղային էր Թաւրի-Բաշի ի թաւրիզ և ունի բազում կալւածս, ի թիւս որոց և բազանիք մի, այդ էր պատճառ, զի ոմանք հակառակորդաց նորա կրեցին կոչէին զնա Բիսաւչի: Ներկայիս է հրատարակիչ «Մշակի» և կրեցի, յորժամ Բեալանթարն Ասուլաճային ողորմութեամբ և հրամանաւն իշխանաւորաց գնացէ ի գանազան կողմանս Կովկասու, վասն զասախօսելոյ ի մաճնարանութիւնն և պանրաշինութիւննէ, խմբազրական օսողարէզն միայ զՀաջուն, յայն ժամ, ես մեռանիցեմ (ման օլում) զթամա-

շա արէք զՀաջի աղային, թէ որպէս առժամայն փոխի զկեամկենց կտրէ «Մշակի» (որ էր թոյլ, մեղմիկ, ոչ ոքն իսկ լինէր կըպչող ոճիւ) և հուր ու կրակ ժայթքէ, զհաւաքեալ մաղձն զմէն թափէ կտրուկ, համաձայն, նամանաւանդ ի վերայ խուժանապետաց: (Հողն եղիցի ի գլուխ խուժանապետաց, ետնի իմա ձվ չի յարձակում ի վերայ նոցա): Կորովն Հաջի աղային սաստկանայ նամանաւանդ, յորժամ Վհահփառն մեռանի. իսկոյն երկաթի տրեխ հագանի և երկաթէ զաւազան առնի ի ձեռն, սաւառնի յամենայն անկիւնս և բանիւ ու գործով ճգնի, տքնի և ջանայ զինքն ընտրել տալ ինչպէս և եղիցէ պատգամաւոր: Վերջերս գնացել էր Պոլիս և ջանար դաշն կոել ընդ Սահմանադիր-Ռամկավար կոչեցեալ հաւաքեալ խմբոյն:

Անուրանալի են մեծագործութիւնք Հաջի աղային, վասն բացանելոյ վարագոյրն և ցուցանելոյ «Ազգային փրկչաց» զինչ պտուղ լինելն. սակայն մեզ տարօրերակ թւի, թէ ինչպէս եղև. որ նա վասն կաթողիկոսական հարցին համակերպեցաւ ընդ քաւանթարական տակտիկային, այն է՝ խօսելի-խօսել և շասել թէ ձվ է զիւր ընտրելին: Գլխով մեծ, հասակաւ փոքր, փորով միջակ: Ազգային Սև-Սանդրօն յոյժ հաւանի գաս. յուսամ, որ վերջն բարի եղիցի և ոչ հիասթափի նման օրինակին Լէօի, ամմէն:

III


ԱՐՇԱԿ ՉՈՒԱՆ. — Ծնեալ յաշխարհն բանաստեղծից և կոչեալ երկրպագու Մուսայից (Մուսաբէգաց ոչ հականայք): Ժամանակ մի, ոչ գիտեմ ինչ չար քամի մրտեալ պինչն, թողեաց քնարն և գնաց խոնեցաւ ընդ ազգապրծման «ազգասէրքն» և չարամիտք ասեն «Լնա նա էլ քիչ բան չարաւ... Ամմա... Փառք զԱբաբչին, ուղուդն ժողովեաց ի քաւան և նորից ի մարդամէջ խառնեցաւ: Տէր փրկեցէ զնա և նորից քաջքերն չըբերիցէ, ամմէն:

IV

ԱՌԱՔԵԼ ԱՊԷՐ ԽԱՆ-ԲԱԲԱՆԱՆ — Լէօ — Ծնեալ ի մայրաքաղաքս Ղարաբաղի, որ է՝ Ղալա, հայրենակից հոշակաւոր փիլիսոփային Պըլը-Պուդի: Յետ աւարտման զուսումն (արն դէ ես հինչ եմ գիտում հընչտեղան), ընկալաւ պաշտօն թէլգաւֆչիութեան. նստեալ Թիֆլիզ—խօսէր ընդ թեհրան, Հնդեման, Ձինու մաշին: Այդու վարժեցաւ, շնորհիւ հանճարաւոր մտաց, յապապային դառնալ պատմաբան, թոչիլ զարեր յառաջ և տակէն միտքաւոյսից հանել պատմութիւնք, շարադրել մեծահատուր զըրեանք և նւիրել զազգին: Արժանաւորութիւնք այդմ պատմական անգնահատելի երկասիրութեանց, երևի ի ճշմարտախօսութեանն հեղինակին, որ բացարձակ խոստովանեցաւ, թէ՛ պատմութիւնն Հաջի Համբարձումայի տամաք աղաւաղեալ է. քանզի՛ յայնմ ժամանակի, որ դրէր այդմ պատմութիւն՝ բարեկամ էր ընդ նորա գնեա և



ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԵՋՈՆԸ ՎԵՐՋԱՆՈՒՄ Է



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԸՆՏԱՆԻՔ

կամ

«ՄԵԹՈՃ ԴԻՍԿՆԵՐ»

վասն դորա համար էլ, չէր կամենում զկրպակն նորա խաթրին: Ո՛չ գիտեմ, եթէ Գրիգոր Արծրունին սաղ էր եղեալ և այժմ «զԼէօի էշին չօշ» ասէր—նոյն կերպ չէր վարելոյ Լէօն: Սա առաջին հիմնադիրն է ինքնաքննադատութեան — այսինքն՝ գրէ պատմութիւն և ապա ինքն փաստերիւք ջանայ ջրել իր գրածն: Օրհնեալ եղիցի: Յայտնի աշխատակից «Մշակ» լրագրոյն, աջ բազուկ Գեալանթարի և ձախ սրունք Հաջի-Բաբայի: Վասն ոտճիկն չաւելացնելու խմար, թողից զիւր պաշտելի «Մշակն» էլ, զխմարագրութիւնն էլ գնաց խառնեցաւ ընդ նորանց, որոնց ենիչէրի կոչէր երէկ և սկսեաց նոյն թափու հայտնել երէկայ պաշտածներին: Ձագըն, շնորհիւ ղուլտուրականաց, փառաւոր յօրէլեանիւ տօնեաց զգարձն նորա և զմեղայականն: Ոմանք ասեն՝ բազում դրամ, իսկ ես ասեմ... երեսուն արծաթոյ... գնահատեցաւ ծառայութիւնն նորա ի քահանայից, ի փարիսեցիներից և ի մաքաւորներից: Լսեալ եմ, զի յանձնարարեալ էր նմա գրել «Պատմութիւնն խուժանապետաց», սակայն այժմ ջուրն անկեաւ. քանզի խուժանապետքն վախեցան—մի՞ գուցէ մի օր իրենց ևս ձգէ Հաջի-Աղայի օրին: Իսկզբանէ կամէր «Սաթարալայական» լինել, սակայն տեսեալ զԳասպարն Կալատուզով և զտկլոզ զուլին նորա, կռահեաց, թէ՛ «այսմ տեղէ խէր չկայ» և փախաւ մտաւ ի «Հորիզոն», ուր մտանեն ամենայն ջուռայի և ամենայն «մասարի» գրագէտք: Ամմա, ոչ մնացէ խաթրն Սև-Սանդրօին, ես դարձեալ սիրեմ զԼէօն, զհին Լէօն: Տէրն փրկեացէ գնա ամենայն փորձանաց և դարձի բերեսցէ, ամմէն:

V

ԲԻԻԶԱՆԻ ՔԷՉԻՆԱՆ.—Հոչակաւոր խըմբագիրն «Բիւզանդիոնի», որ ի Պալիս: Ծնեալ ի ժամանակի սխրագործութեանց ենիչէրիաց: Յոյժ քաղաքագէտ և տնտեսագէտ: Քաջ ըմբռնէ ժամանակ և պարագայքն ու ըստ այնմ բռնէ զիւր գործն:—1870-ին էր թունդ Ազգային Սահմանադրական և ճառէր ըստ այդմ. 1876-ին կողմնակից էր 16-րդ յօդուածին, որ կլիսկօնձի եղեալ փոխեցաւ 61-ի, 1880-ին էր թունդ համրական, 1890-ին գումգափուական, 94-ին կոտորածական, 95-ին ջերմ երկրպագու Օրմանեանի, մինչ Սահմանադրութիւնն Օսմանեան և խայտառակութիւնն խուժանական: Կարճ ժամանակ մի ճառեալ զովարանութիւնքն «Ազգային փրկչաց», յորժամ արժանացաւ զօփային, դարձաւ Անմաղ-Րիզայական, ապա՝ եղև Սապահգիւլէն թունդ հնչակեան, Ակնունիէն թունդ դաշնակցական, Մուշեղ եպիսկօլէն թունդ սահմանագիր, մինչև ցնոր տնօրինութիւն: Տայ Աստուած գոնէ որդիքն մարդ զառնան, ամմէն:

VI

ՍՈՒՔԻԱՍ ԱՐՀԻ ՊԱՐԶԵՐԵՍԵԱՆ.—Ծընեալ ի Գողթան, տարիքն հաստատ ոչ գիտեմ, սակայն քսան տարուց ի վեր է լսեմ, թէ՛ 70 տարեկան է: Պարթև հասակօք,

փառաւոր մօրուքօք և զեղատեսիլ մազքն երեսաց օրինաւոր մազքաշիւ մաքրեալ: Անձնէր մշակ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ: Պարզախօս և յանդուգն, որոյ պատճառաւ ոչ շատ բարձր անձինք և ոչ շատ ստոր անձինք ոչ սիրեն գնա: Վասն փառաւոր փոխանորդութեանն Երևանի և արկածոցն՝ հոչակեցաւ անունն նորա մինչ Օբլօլ քաղաքն սառնամանեաց: Վասն դորա և վասն շինելոյ զտպարանն փառաւոր, ազգայինչինեբէն վարձատրեցաւ թքով և հայտնանօք, թէ վասն ինչո՞ւ խմար փողեք չտուց, որ իրենք լափեն: Իսկզբանէ ատէր զհոսոս և իրաւունք ունէր. ամմէն:

(Կըշարունակի) ձերիկ Արեղայ



Ա Հ Ա Կ Մ Ա Լ Ե Ա Ն Յ Ի
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԶԳԵՍՏՆԵՐԻ
ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

Գանովսկայա փողոցից ՏԵՂԱՓՈՒՆԵՑ Երևանեան հրատարակ, Խարազեանի տուն՝ «Кавказъ» թերթի նախկին խմբագրատունը—Առաջին Փոխադ. Վարկի Ընկ. կից:
Արևեստանցում ընդունուած են պատւէրներ տղամարդկանց ամենաճաշակաւոր զգեստներ կարելու ուստական և արտասահմանեան ապրանքներից,
Որոնք ստացուում են շաբթէ-շաբաթ՝ և անմիջապէս:
Գ Ն Ե Ր Ը Մ Ա Տ Չ Ե Լ Ի 0—11

Բ Ա Ց Ի Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն
(Շոտով լոյս կրտսննէ)

ՎՏԱԿ ԻՐԱՆԻ

Երկամեայ գրական-գիտական հանդիսի: Օրգան Մոնպելիէի պարսկահայ կուլտուրական միութեան:
Հրատարակութեամբ Մոնպելիէի պարսկահայ ուսանողութեան:
Բաժնեզինն է տարեկան 5 ֆրանկ
Ռուսաստանի համար 2 ռուբլի.
Հասցէ՝ Rédaction «Vdak Iran» 5 rue Fontenille choutpellier France
Խմբագիր՝ Ս. Տէր-Բաղդասարեան

Նորագոյն նկարներով հսկայական քանակով

ՍՏԱՅԻԱԾ Է

Ե. Յ. Ծ Ա Տ Ո Ի Ր Ե Ա Ն Ի


Գ Է Պ Օ Յ Ո Ի Մ

որտեղ և վաճառուում է գործարանային գներով:

Թիֆլիս Դիպոցովսեա փողոց: 50—49

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կ Ա Ն Ա Ն Ց
ՊՐՈՓԵՍԻՏՆԱԼՆԻ ՆՈՐ ԴՊՐՈՑ
„Ի Դ Ե Ա Լ“
Կար ու ձևի և ամեն ռեսակ գեղեցիկ ձեռագործների ԱՇԱԿԵՐՏՈՒՆԻՆԵՐԻ ընդունելութեան պայմանները շատ նպաստաւոր են բոլոր դասակարգերի համար
ԶԿԱԻՈՐՆԵՐԻՆ ՉՐԻ
Պարպմունքները սկսելու են օգոստոսի 27-ից. հասցէն՝ Уголь Елизаветинскій и Реутовскій. 10—9



ՎԱՃԱՌԻՌԻՄ Է ԲԺՇԿԱՊԵՏ ՄԻՆԱՍ
ՄՈՒՐԱԴԵԱՆԻ

ՍԻՖԻԼԻՍ

Հանրամատչելի ընթերցանութեան հա-
մար և

Պատկերազարդ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Վասերմանի եղանակով սիֆիլիսի ո-
րոշելը.—Միջոցներ սիֆիլիսի վարա-
կումից պաշտպանելու համար.—Ա-
մուսնական վկայականներ.—Դեղեր.—
Սնդիկ եօզ.—Էնրիխ-Հատայի նոր դեղ.
—Եզրափակութիւն.—Գործածելիք դե-
ղատոմսեր:

Գինն է 80 կոպ.

Դիմել ըստ գրավածանքերին կամ հե-
ղինակի բնակարան. Ртищевская №1.
10-10

МАГАЗИНЪ КОМПОЗИЦІЯ

Тифлисъ, Пушкинскіи пассаж.№ 8

громадная
экономія
шведскаго компо-
зиціон. бѣлья
Носится не менѣе
двухъ лѣтъ
Постоянный боль-
шой выборъ свѣ-
жаго товара
**ВОРОТНИКОВЪ,
МАНИШЕКЪ И
МАНЖЕТЪ**
По фабричнымъ
цѣнамъ
Передѣлка въ лю-
бой фасонъ
бесплатно



Продаются портняжныя принадле-
жности, как-то пуговицы, подклад-
ки, мѣль и впрочѣе.

**ИНБЕТТА ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕ-
РЕЙНЫЙ ОТДѢЛЬ**

Остерегайтесь поддѣлокъ и подра-
жаний

Просимъ обратится только Пуш-
кинскій пассажъ **№ 8**

15—6 (о. ш.) М. А. КАЛТАКЯНЪ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. Ք. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ ՇԻՐԻՆԱՆՑ

ՆԱԾԻՈՒՆԸ

250 երեսանոց վեպը: Հատով արժէ
80 կոպէկ, գումարով գնողներին 25%
զիջումն: Ապառիկ, առանց բացառու-
թեան, ոչ ոքի չի ուղարկելի: Գրա-
վաճառները ևս պէտք է դիմեն կան-
խիկ դրամով: Պահեստն ինձ մօտ է:
Հասցէս.—Тифлисъ, Тандоевская
церковь. Свяиц. Ар. Джугурянцъ.
595 (կ. ու. ե.) 10—7

== Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառուք է ==

Ն Ա Ր-Գ Ո Ս

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

Գինն է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Գուտտնընըրզ» գրախա-
նութեամբ, ուր և դիմում են գումարով գնողները:

10—3



Первокл. ресторакъ „АННОНА“



„Здание Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко

Ежедневно отъ 2 час. до 5 час.
пополудни и вечеромъ отъ 10 час.

до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный ор-
кестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць—г-жи Сақко и Марія Оландезе и
баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.**

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2
час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60,
трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская;
билліарды. Имѣются кабинеты, отъ жары можно спастись только въ

„АННОНА“

52—25



Բ Է Ս Տ Ո Ր Ե Ն - Ճ Ա Ծ Ե Ր Ե Ն „ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ թամամշեան
քարվանսարայի տակ


ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐԲԻՑ

— Եւրոպական և ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խո-
հանոց ու պատրաստակամ ծառաներ

25—25





—Կառապան, ինչ ես կարծում. կարելի չէ որ
դեօզ վարդապետին կաթողիկոս ընտրել:
—Նեղի եկ պարոն:



Մեկարգում—

—Քեռակիր—ինձ թու՞մ է, որ հայոց կաթողի
կոս ընտրելու իրաւունք ամենքը ունեն—զու ինչ
կասես:
—Կարելի է պարոն:




Վագոնում—

—Ահա տոմսակը, բայց սառ ինչքե՞մ, պ. կոն-
դուկտուր, մինիստրը չի սխալւում. ես տասմ եմ որ
վարդապետ կարող է դառնալ կաթողիկոս:
—Ինչպէս տան՞ պարոն:



Նաւի վրայ—

—Նաւաստի, դուք ինչ էք կարծում, մեր եկե-
ղեցու օրէնքին հակառակ չէ՞ որ վարդապետը կա-
թողիկոս ընտրելի:
—Նայած ժամանակին:



Պոլսում—

—Պե՞տրուք չի—ինձ հետաքրքրում է մեր կար-
ծիքը. կաթողիկոս կարող չէ ընտրել իւրաքանչիւր
հայ:
—Քո՞ւ ընտրել—ինձ ինչ:



Հիւրանոցում—

—Այ տղան—ի՞մ կարծիքով վարդապետ կաթողի-
կոսացու տանիլ լաւ է... քան եպիս...
—Նա Քրիստոս է՞մ աղա, ինչքա՞ն չի պարպեր...

Համ. Առաքելանք երբ Թիֆլիս Հոռվմ ուղևորեց խաղաղութեան կոնգրէսին—«Մշակի» խմբագրատանից սկսած մինչև Պոլիս Թողաթլեանի հիւրանոցում պատահած մարդկանց հետ հետեւեալ խօսակցութիւնը ունեցաւ: